

եւ առնուին որպէս մեկնակէտ, Մխիթար կը դադարի իսկոյն ըլլալէ խորհուրդ, եւ կը պատկերանայ որպէս անաղօտ լուսարձակ մը, որուն հօրը եւ ջերմին ճառագայթները կ'երթան ծաւալիլ ազգին բոլոր խաւերուն մէջ եւ դառնալ աղբիւր կենսունակութեան: Տեղն ու ժամանակը չէ աւելի մանրամասնելու եւ ճշտագոյն եզրաբանութեամբ մը անդրադառնալու այս հարցին շուրջ:

Մխիթար մեզի եւ բովանդակ ազգին համար այն անմերձեանալի բարձունքն է, որուն կը նայինք դմայլած: Մխիթար երկրորդ լուսաւորիչը ազգին, լուսանորոգը հին երջանիկ դարերու, երբ մեր ժողովուրդին ճակատագիրը անայլայլ եւ վստահ քայլերով կը ձկտէր իր նպատակին տիեզերական համեղ-բայրութեան մէջ: Մխիթար, զօդ միութեան եւ համերաշխութեան, է պարզապէս մեր ժամանակին համար լոյսի առաքեալը եւ մտքերու առաջնորդը: Ահաւասիկ ինչ որ կարելի է խորհիլ եւ ըսել Սերաստիոյ մեծ Զաւակին մասին՝ իբրեւ բացարձակ ճշմարտութիւն եւ անհերքելի իրականութիւն:

Ինքը անցած այլեւս անմահներու աշխարհը, թողած է ետին իրմէ հիմնուած իր մեծ գործը: Ս. Ղազար, հայրենի աշխարհին մէկ պատկերն է, ուր ծնունդ առաւ եւ բեղնաւորեցաւ անոր հանճարեղ յղացքը: Ս. Ղազար օրորան հայ մշակոյթին, հայ կեանքին, աւելի քան երկուքուկէս դար իր կրթական եւ հրատարակչական աննախընթաց եւ անխոնջ գործունէութեամբ զբաւած է ուղղորդութիւնը հայ համայնքին: Համայնքը, սակայն, կը բաղկանայ անհատներէ: Ընտիր եւ զարգացած անհատը զբաւականն է ազգին բարձրութեան եւ համայնքային գոյութեան: Օտար երկինքներու տակ կեանք առած հայ մանկութիւնը, ներկայ շրջանիս մանաւանդ կը կարօտի աջակցութեան եւ բուռն աշխատանքի: Գիտակից հայրենասիրութեամբ օժտուած անհատները, որոնցմէ յետոյ պիտի կազմուին ազգային միութիւնները, մեր գաղութային պայքարին առաջին զօրն վրայ կը գտնուին: Վեր բռնել անհատը դպրոցով, մամուլով, կրօնական սկզբունքներով, պէտք է ըլլայ միակ նպատակակէտը բոլոր կազմակերպութիւններուն եւ բոլոր կեդրոններուն: Եկեղեցի, դպրոց, մամուլ, առանց շփոթելու ազգի ու կրօնքի գաղափարները, տակաւին երկարատեւ պիտի պահեն գաղութներու մէջ տուայտող հայութեան մը բեկորները:

Այս մտահոգութեամբ վաստակող դաստիարակները եւ առաջնորդները մեր ժամանակներուն, կրնան վստահ ըլլալ թէ լուծած պիտի ըլլան Մխիթար խորհուրդը, կամ առեղծուածը ազգային գոյութեան՝ համերաշխութեան եւ սիրոյ աստուածային գաղափարներուն մէջ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ



1598-71

ԴՐԱԽՏԱԳԻՐՔ

ԱՌԱՔԵԼ ՍԻՒՆԵՑԻՒ

ԱՌ. ՍԻՒՆԵՑԻՒ ԵՐԿԵՐԸ

Շուրջ կէս դար առաջ՝ Ս. Ղազարու տպարանէն լոյս տեսաւ Առաքել Սիւնեցիի Աղամգիրքը, աշխատասիրութեամբ Հ. Մկրտիչ Վրդ. Պոտուրեանի(1). ու յաջորդաբար, նոր հատորով մը հրապարակելու Ժ. Դարու Տաթեւեան սոխակին միւս քերթունքներու հաւաքածոն, խմբագրութեամբ միւսնոյն բանասէր Հօր(2), որ կը ներկայացնէր բնագրի քննական հրատարակութիւն մը՝ բաղմամբիւ ձեռագիրներու բաղդատութեամբ, տալով նաեւ կենսագրական կարեւոր տեղեկութիւններ եւ այլ դիտողութիւններ, յատկապէս դանդաղեցող համայնուն Առաքել Բաղդեցիի երկերէն:

Մեր միջնադարեան դրականութեան գոհարները ևւրոպացիներուն ծանօթացընելու տենչով առլցուն, Արշակ Զօպանեան իսկոյն Փրանսիէնի կը թարգմանէր Առաքել Սիւնեցիի քերթունքներէն եւ Աղամգիրքէն հատընտիր էջեր, ու կը կազմէր La Roseaie d'Arménie-ի առաջին հատորը, որու ընդարձակ յառաջաբանին մէջ կը վերլուծէր դրական ու գեղարուեստական արժէքը Առաքել Սիւնեցիի բանաստեղծութեան(3):

Հ. Ներսէս Վրդ. Ակինեան, Զօպանեանի հրատարակութեան առիթով կատարած դրականականի մը մէջ՝ կը խոստանար կենսագրական քանի մը նոր գիծեր մատնանել Առաքել Սիւնեցիի մասին, ինչպէս նաեւ խօսիլ անոր հարազատ եւ անհարազատ տաղերու թիւին վրայ՝ ընդարձակ ուսումնասիրութեան մը մէջ(4). դժբախտաբար ցարդ լոյս չէ տեսած այդ ուսումնասիրութիւնը:

Վերջերս, Արշակ Զօպանեան, Գեղումիի մէջ հրատարակած յօդուածի մը մէջ, ուր երեւան կը հանէր միջնադարեան հայ գրականութեան ի նպաստ թափուած ճիշդը՝ վերջին յիսնամեակի շրջանին, փափաք կը յայտնէր որ փութով ի լոյս ընծայուէր Առաքել Սիւնեցիի վերագրուած մէկ ուրիշ կարեւոր գործը, Դրախտագիրքը(5):

ԴՐԱԽՏԱԳԻՐՔ

Հ. Մկրտիչ Վրդ. Պոտուրեան, իր հրատարակած երկրորդ գրքի նախաբանին մէջ, Առաքել Սիւնեցիի գործերու շարքին կը դասէ Դրախտագիրք մը, զոր կը համարի թէ նոյն ըլլայ Ստեփանոս Ռոշեանի յիշատակած Աղամգիրքի չորրորդ հատորին հետ(6):

(1) «Թանգարան հիմ եւ նոր դպրութեանց. Դ.» ԱՌԱՔԵԼ ՍԻՒՆԵՑԻՒ. Աղամգիրք. Վենետիկ, Ս. Ղազար, 1907, էջ 333: Գրախօսական մը, Ե. Պ. Ֆ. ստորագրութեամբ, տե՛ս Հանդէս Ամսօրեայի մէջ, ԻԲ. (1908), Բ. 3, էջ 92:

(2) «Թանգարան հիմ եւ նոր դպրութեանց. Զ.» Առաքել Սիւնեցիի եւ իր քերթունքները. Վենետիկ, Ս. Ղազար, 1914, էջ 356: Առաքել Սիւնեցիի մասին տե՛ս նաեւ Հանդէս Ամսօրեայ Ժ. (1900), Բ. 5-6, էջ 154: Ամսօրեայ Ժ. (1908), Բ. 3, էջ 96: Դարձեալ անդ, ԻԲ. (1908), Բ. 3, էջ 96: Եւ Բ. 4-5, էջ 156: Բզմվյ. 1924, էջ 14-16:

(3) La Roseaie d'Arménie. Tome Premier: Arakel de Sunik; pages choisies. Paris, éd. Ernest Leroux, 1918, pg. VIII + 120, 4°.

(4) Հանդէս Ամսօրեայ, ԼԴ, (1920), էջ 51-54:

(5) Գեղումի, 1947. (նուիրուած «Բազմալեզու» Ս. դարադարձին). «Միջնադարեան Հայ գրականութիւնը». էջ 19-24, յատկապէս էջ 20 եւ 23:

(6) Առաքել Սիւն. եւ իր քերթ. (տե՛ս Ծանօթ. 2), էջ 104: Աղամգիրքը բաղկացած է միայն երեք գրքերէ. կամ հատորներէ:

Դրախտագիրք կոչումը՝ Հ. Մ. Պոտուրեանի կողմէ է, հիմ ունենալով Հ. Ալիշանի մէկ բացատրութիւնը՝ ուր կը նոյնացուին Աղաւգիրք եւ Դրախտագիրք(7) :

Հ. Մ. Պոտուրեան հետեւեալ տեղեկութիւնները կու տայ Դրախտագիրքի մասին .

« Դիրքս մեր մատենադարանի թիւ 563 Ձեռագրին մէջ(8) գտայ, որ Գր. Նիւսացւոյ եւ Նարեկացւոյ Երգերգոցի մեկնութեանց հետ՝ կը բովանդակէ Առաքել Սիւնեցւոյ հազուադիւտ քանի մը ոտանաւորներ :

« Զարմանալին այն է՝ որ ձեռագրին ընդօրինակողը՝ մի եւ նոյն գիրքը երկու անգամ ընդօրինակած է. առաջինը՝ 440-516 էջերու մէջ, իսկ երկրորդը՝ յէջ 517-597 : Վերջինս հետեւեալ նախադրութեամբ կը սկսի . « Բանք խրատականք եւ յոյժ հարկաւորք, որք քակտեն զխորհուրդ մարմնական եւ տան ուրանալ զանոտի խաբէութիւն աշխարհիս եւ այլ իմն չինեն զխորհուրդ մարդկան » :

« Ի վերջոյ՝ համառօտ յիշատակարանին մէջ կը յիշէ ինքզինքը .

« Նուաստ ոգի տէր Առաքեալ
յոտս անկանիմ ձեզ,
Զմեզ յիշեցէք յաղօթքս ձեր
եւ զննչեցեալսն մեր » :

« Դրախտագիրքը քսան ճառերու կամ գլուխներու բաժնուած է, 4-4-5 չափով, 1060 տող :

« Անոր համար Դրախտագիրք կը կոչենք՝ վասնզի հեղինակին նպատակն եղած է այս աշխարհի բնակիչները իր հետ առնելով՝ փնտռելու ելլել այն անծանօթ քաղաքը, ուսկից արտաքսուած էր Ադամ . եւ

այդ՝ դրախտն է, «որուն դրան բանալին՝ ողորմութիւնն է» : Այդ քաղաքը մտնելու համար նախ հոգովքովքն պէտք է անցնիլ . այս այն քաղաքն է՝ որ Ադամայ մեղանչելէն վերջ հիմնուեցաւ, որ միայն մուտքի դուռ ունի : - Մեռած հոգիները ճանապարհորդին կ'աղաղակեն որ խուսիլ եւ աղօթք զրկեն երկինք, որպէսզի օր մ'առաջ ազատին ու երկնային դրախտին արժանանան :

« Առաքելի այս դործն ալ Ադամգիրք Բ. ի պէս նոյնապանդ է, այնպէս որ ձանձրանալի է բռնադրօսել բերուած եզ կամ ես յանգը . դրքիս մէջ թէեւ կան գեղեցիկ պատկերներ, բայց աւելի ընդարձակ տեղ կը բռնեն ձանձրացուցիչ կտորները եւ կրկնութիւնները :

« Լեզուն աւելի աշխարհաբարի մօտ է քան Ադամգրքինը »(9) :

ԴՐԱԽՏԱԳՐԻՔԻ ԶԵՆՈՒՄԻՆ

Մատենադարան Ձեռագրաց Ս. Ղազարու, թիւ 363 : -

Թուղթ՝ 306 : - Մեծութիւն՝ 18,7 × 12,5 : - Գրութիւն՝ միասին : - Նիւթ՝ թուղթ : - Կազմ՝ կաշեպատ տախտակ : - Մագաղաքեայ պահպանակ՝ մէկ թուղթ սկիզբը եւ մէկ թուղթ վերջը, որոնք կը պարունակեն Աւետարանի հատուած մը, Մեսրոպեան երկաթագրով (Մատթ. Ի. 46-57) : - Համգամանք՝ լաւ պահպանուած : - Գիր՝ բոլորգիր : Միայն թղ. 3ա-3բ նոտրգիր հատուած մը, ընդօրինակութիւն՝ մեկնողական գրքէ մը, Մննդոց մասին : - Դատարկ՝ սկիզբի մագաղաթեայ պահպանակէն վերջ՝ երկու սպիտակ թուղթեր՝ նոր աւելցուած . առաջինին վըրայ՝ ձեռագրին բովանդակութեան ցանկը : Ուրիշ դատարկ թուղթեր՝ 1ա-2բ, 4ա-4բ (քանի մը տող գրչափորձ), 5ա -

փոփելով կու տար վերջերս H. Thorossian, in Histoire de la littérature Arménienne գրքին մէջ, 1951, Paris, Impr. Araxes, pg. 217-218 :

(7) Սլիշման. «Հայագիտութիւն», 1901-2, էջ 126 :

(8) Ուղղէ՝ թիւ 363 Ձեռագրին մէջ :

(9) Առաքել Սիւն. եւ իր քերթ. (տե՛ս ծանօթ. 2), էջ 104-105 : Նոյն տեղեկութիւնները ամ-

5բ, 175ա-175բ, 176ա (գրչափորձ), 176բ, 304բ - 306բ : Կիսախորանք՝ գունաւոր պարզարուեստ, թղ. 6ա, 124բ, 177ա : Լուսանցաքաղփ՝ չափ պարզ, թղ. 6ա, 124բ, 177ա, 184բ, 195բ, 202ա, 207ա, 226ա, 228բ, 232բ, 233բ, 236ա, 237բ, 239ա, 243բ, 245ա, 246ա, 246բ, 249ա, 251ա, 254ա, 257բ, 260բ, 261բ, 263բ, 265ա, 267բ, 268ա, 268բ, 270բ, 272ա, 274բ, 276ա, 277բ, 282բ, 284ա, 285բ, 286ա, 289ա, 291ա, 293բ, 297բ, 299ա, 300բ, 301բ : Խորագիրք՝ կարմիր : Ժամանակ՝ 1679 (Ա. Մասին) : Տեղի՝ անյայտ : Գրիչ՝ Մարտիրոս քահանայ (Ա. Մասին), Մատթէոս երէց (Բ. Մասին?) : Ստացող՝ Վարդան վարդապետ (Ա. Մասին) :

Դիտողութիւն

Մինչեւ թղ. 174բ միեւնոյն գիրն է, Մարտիրոս քահանայի Անկէ վերջ ոտուած մը կայ թերթերու համարին մէջ, կը պակսին ծգ-ծք թերթերը : Մինչեւ ծգ թերթ՝ իւրաքանչիւրն ունի 12 թուղթ. ծք թերթն ունի 4 թուղթ. ու կը փակուի յիշատակարանով (թղ. 174բ. տե՛ս ստորեւ) : Յետոյ կու գայ ծք թերթին վերջին թուղթը (175ա-175բ, դատարկ) : Ապա կը սկսի Ի թերթը (թղ. 176ա գրչափորձ, նոյն՝ թղ. 180աի սկզբնաւորութեան հետ. թղ. 176բ դատարկ) : Կը շարունակուին թերթերը Ի-1 (իւրաքանչիւրը 12 թուղթով), ապա թերթ լա՝ 7 թուղթով :

Ի թերթով (թղ. 177ա) կը սկսին Առաքելի տաղերը, նոր գրիչով : Լա թերթով (թղ. 300ա) գրիչը կը փոխուի, եւ վերջաւորութեան կը յիշատակագրէ Մատթէոս երէց (տե՛ս ստորեւ) :

Ձեռագրիս այս երկրորդ մասը, Ի թերթէն աւելին, ունի նաեւ առանձին թուագրութիւն մը թերթերու ... դ. (իզ), ե. (իզ), գ. (իւ), է. (իզ), ը. (իէ), թ. (իւ), ժ. (իթ), ժա. (լ), (?) լա :

Կ'եզրակացնենք՝ թէ Ձեռագրիս երկրորդ մասը անշատ է առաջինէն, եւ կազմի ժամանակ է որ միացած են : Մանաւանդ որ այս երկրորդ մասի թուղթը աւելի ճերմակ է :

Իսկ ծգ-ծք թերթերը, որոնք մաս կը կազմեն առաջին ձեռագրին՝ չկան :

Յիշատակագրութիւն

Սկիզբի մագաղաթեայ պահպանակին վրայ կը կարդանք. «Զգրչադիր մատենաս Վ. Հ. Սիմ. յԱլիսցիսոյ առաքեալ էր Ի Պօլիս. անտի երեք ի վանս Վ. Հ. Գրի. յամի 1845 » :

ՅԻՇԱՍՏԱԿԱՐԱՆՔ

Ա. — Թուղթ 174բ

«Բրիստոս Աստուած, ի քո ի միւսանդամ դալստեանդ՝ ողորմեա ստացողի գըրոցս, Վարթան (sic) վարդապետին, եւ իւր ծնողացն եւ համօրէն ազգատոհմիցն, որք աստ են կենդանեաց, եւ որք ննջեցեալք են առ քեզ՝ ողորմեա եւ արժանի արա երկնից արքայութեանդ :

Եղեւ աւարտ լուսադարդ իմաստապատում տառիս ի թվականութեանս Հայոց ՌձԻԸ Մարտի ամսոյ իը, ձեռամ (sic) Մարտիրոս քահանայի : Եւ որք հանդիպիք այս սուրբ գիրքս կարդալով կամ օրինակելով՝ յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս ձեր, եւ դուք յիշեալ լիջին (sic) ի Բրիստոսէ Աստուծոյ մերոյ, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն » :

Բ. — Թուղթ 303բ

« Եւ ընդ նմին զիս զՄատթէոս

երէց յիշեցէք եւս :

Որ եւ գրեցի զսա թախանձանօք ի յիշատակ մեզ :

Անմեղադիր լերուք գրորոյս,

զի յիշտապէի ես :

Փափաք ունիմ բազում գրանաց
Հանդարտեցայ ես » :

Այս յիշատակարանը՝ գրիչը ներմուծած է Դրախտագիրքին քսաներորդ ճառին մէջ, ընդմէջ 29րդ եւ 30րդ տուներուն . այսինքն՝ ընդ մէջ Առաքելի յիշատակարանին (29րդ տուն) եւ գոհարանական տունին (30րդ) :

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ ԶԵՆՈՒՄԻՆ

Ա. — Թղ. 6ա-124ա. — Գրիգորի Եպիսկոպոսի Նիւսացւոյ արարեալ թուղթ «Յաղագս Երգոյ Երգոց» :

Սկիզբ. Ընկալայ որպէս վայել էր քում պարկեշտ վարուցդ եւ սուրբ անձինդ ըզփոյթն յաղագս երգոյ երգոց... :

Վերջ. Այլ առաւել եւս կերակուր է փա-
փազողացն ընդունելութեամբ զբաղման-
սըն. յաղագս այսորիկ եւ բովանդակ
զցանկութիւն անուանէ:

Բ. — Թղ. 124թ-174թ. — Մեկնութիւն
Երգոյ Երգոց ի հոգեխառն իմաստապա-
տում առն Սողոմոնի արքայի Իսրայէլի:
Չոր ասացեալ է Տեառն Գրիգորի ներանձ-
նաւոր քահանայի եւ հոգեշնորհ վարդա-
պետի, որդւոյ Տեառն Խոսրովայ.....:

Սկիզբ. Հրամանաւ Քրիստոսասէր թա-
ղաւորութեանդ, ով տէր արքայ, բուն
եւ աւելի էր քան զկար մեր. զի այդպիսի
խնդիր մեկնել զերգերոց.....:

Վերջ. Աղաչեմ զընթերցասէրդ, մի՛ մե-
ղադրանս յաւելուլ ինձ՝ յաղագս ձեռնար-
կութեան ի գործ, որ աւելի էր քան զար-
ժանն իմ: Եւ Քրիստոսի մարդասիրին
փառք, յաւիտեանս յաւիտենից. ամէն »:

Ու կը սկսի Բ. յիշատակարանը, զոր
վերեւ ներկայացուցինք:

Գ. — Թղ. 177ա-304ա. — Առաքել Սիւ-
նեցիի տաղեր, որոնց ցանկը ներկայացու-
ցած է Հ. Մկրտիչ Վ. Պոտուրեան իր վե-
րոյիչեալ հրատարակութեան մէջ (10):

1. — Թղ. 177ա-184թ. — «Խրատք աշ-
խարհական քահանայից եւ կանանց նո-
ցին, ըստ կանոնաց սրբոցն Հայրապե-
տացն: Ասացեալ ի տէր Առաքելոյ Սիւ-
նեաց. ի խնդրոյ տէր Յովաննիսի, Մըշոյ
էպիսկոպոսի: Տունս հարիւր եւ տասն»:
Սկիզբ. «Տեսէք զխորհուրդ անճառ բա-
նից»....:

Վերջ. «Եւ որ պահեն զնա սրբարար
լինին սրբոցն հաւասար»:

(10) Առ. Սիւն. եւ իր քերթ. (տե՛ս ծանօթ. 2),
էջ 14, թիւ 23ի ներքեւ:

(11) Առ. Սիւնեցի աշտեղ կ'անարկէ մահուան
իր եղբոր Սարգիսի, զոր անունով ալ կը յի-
շատակէ, երկու տուն առաջ (տե՛ս Առաքել
Սիւն. եւ իր քերթ. ըստ ծանօթ. 2, էջ 134):
Արդ, զարմանալի է թէ ինչպէս Հ. Մկրտիչ
Վրդ. Պոտուրեան չէ վարանած գրել. «Ինձ

2. — Թղ. 184թ-195թ. — «Դարձեալ
վասն կուսակրօն քահանայից ժամարարաց
սրբոց, թէ որոյ շնորհի հասին. կամ որ-
պէս պարտ է կեալ արժանապէս պատա-
րազողացն: Տունն քառասուն երեք»:

Սկիզբ. «Տեսի ըզփառն անճառելոյ...»:
Վերջ. «Ի յուր հարիւր հայոց թուական
Ու վաթսուն ու հինգ անցեալ էր ամ
Վախճանեցաւ նա կուսութեամբ
'Ի եթող կսկիծ ինձ անվաղճան»(11):

3. — Թղ. 195թ-202ա. — «Խրատ վասն
խնդրողաց ինչ ի Տեառնէ՝ թէ զորոց խն-
դիրք կատարէ Աստուած. 29»:

Սկիզբ. «Տեսի մեծ բան ու անճառելի...
Վերջ. «Լըսէ Աստուած նոցին հայցման
Եւ կատարին զոր կամենան»:

4. — Թղ. 202ա-207ա. — «Դարձեալ
վասն յատկութեան զանազան բարուց
մարդկան. զի ի ժգ ցեղս բաժանին մար-
դիկ... տունն ԿԱ»:

Սկիզբ. «Չէս տասնութեց ցեղս մարդ-
կան»:

Վերջ. «Չարքն վիշապք են եւ դազան
Բարիքն տատրակ ու աղաւնանման »:

5. — Թղ. 207ա-226ա. — «Վասն յատ-
կացուցանելոյ զդասս առ հասարակ...
տունք ՄԽ»:

Սկիզբ. «Երկոտասան դասք են սրբոց»:
Վերջ. «Արդ աղաչեմ զձեզ միաբան
Որք ընթեռնուք զայս ի յատեան,
2ի տէր Առաքել հեղք ու անարժան
Յիշէք յաղօթս ձեր սրբազան»(12):

6. — 226ա-263թ. — Ա. օրինակ Դրախ-
տագիրքի

կը թուի որ Առաքել մէկ եղբայր մը միայն
ունեցած ըլլայ, այն է Բարսեղ քահանան,
զոր այնքան գորովով կը յիշէ իր բոլոր յի-
շատակարանաց մէջ...» (ամդ, էջ Ժ):

(12) Այս հինգ տաղերն ալ լոյս տեսած են Հ.
Մկրտիչ Վ. Պոտուրեանի 1914ի հրատարա-
կութեան մէջ. էջ 92-110, 111-135, 136-149,
150-162, 215-240:

«Ճառ առաջին. վասն դրախտի աս-
տուածաշունչ գրոց. տունն ԼԷ»:

Սկիզբ. «Չարմանալի բան մի տեսայ...»:
Վերջ. «Այլ դու փութա յայն բուն քա-
նոր կու տանին զքեզ»:

Յետոյ կը շարունակուի երկրորդ փա-
ցը, երրորդ փա, Չորրորդ փա, ... մինչեւ
Քսաներորդ փա:

7. — Թղ. 263թ-304ա. — Բ. օրինակ
Դրախտագիրքի
«Բանք խրատականք եւ յոյժ հարկա-
ւորք...»:

8. — Թղ. 304ա. — «Պատմութիւն խո-
ղին ի պէտս մարդկան»:

Սկիզբ. «Արդ խողն է դեղ ամէն ցաւի
Վերջ. «Գօճա մօր միսն դինով եփի,
Դեղ է ցաւոց արեան բերի.
Մազն ոչխարաց թիթե».....
(կիսաւարտ)

ՆԵՐԿԱՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս նկատեցինք, թ. 363 ձեռագրին
մէջ երկու անգամ օրինակուած է Դրախ-
տագիրքը, միեւնոյն գրչէն: Երկրորդը
ունի նաեւ նախաբան մը, ուր կը ներկա-
յացուի նախ նիւթը, հեղինակը եւ բովան-
դակութիւնը. հոսկ քերթուածը՝ քսան
գլուխներու կամ ճառերու բաժանումով:
Ներկայ հրատարակութեան մէջ իբրեւ
առաջնորդ ընտրեցինք այդ երկրորդ օրի-
նակը, զոր կը կոչենք B. իսկ առաջինը
կ'անուանենք A:

Նախաբանի հրատարակութեան ընթաց-
քին, ստորեւ կու տանք բնագրին տարբե-
րակները, երբ հարկ տեսած ենք փոփո-
խութիւն մը ընել, առանց սակայն բնա-
գրին անունը տալու, քանի որ մէկ օրի-
նակ է:

Քառակուսի փակագիծներու մէջ առած
ենք՝ ինչ որ քերականօրէն աւելորդ կը

նկատենք: Ընդգծած ենք՝ ինչ որ մեր
կողմէ դրած ենք, իբրեւ անհրաժեշտու-
թիւն, ստորեւ տալով բնագրին ձեւերը:
Պատիւները կ'ամբողջացնենք՝ երբ դիւրին
ու ծանօթ են. այլապէս՝ կ'անդրադա-
ռնենք ստորեւ: Ձեռագրած ենք նաեւ ծա-
նօթագրութեանց առանձին բաժին մը:

Կարգ մը նշաններ որդեգրած ենք, առ
ի դիւրութիւն եւ պարզութիւն քննական
պատկերին. հետեւեալներն են.

— = չունի
+ = աւելի ունի (կ'ընդգծենք աւե-
լորդ բառը)
× = փոխանակ

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

Կու տանք նախ համեմատական ցուցակ
մը երկու օրինակներու ալ պարունակու-
թեան, համապատասխան թուղթերու թի-
ւերով:

	A.	B.
ՆԱԽԱԲԱՆ	— — — —	263թ-265ա
ՃԱՌ Ա.	226ա-228թ	265ա-267թ
ՃԱՌ Բ.	228թ-229ա	267թ-268ա
ՃԱՌ Գ.	229թ-230ա	268ա-268թ
ՃԱՌ Դ.	230ա-232ա	268թ-270թ
ՃԱՌ Ե.	232ա-233ա	270թ-271թ
ՃԱՌ Զ.	233ա-235ա	271թ-273թ
ՃԱՌ Է.	235ա-237ա	273թ-276ա
ՃԱՌ Ը.	237թ-239ա	276ա-277թ
ՃԱՌ Թ.	239ա-243թ	277թ-282թ
ՃԱՌ Ժ.	243թ-245ա	282թ-284ա
ՃԱՌ ԺԱ.	245ա-246ա	284ա-285թ
ՃԱՌ ԺԲ.	246ա-246թ	285թ-286ա
ՃԱՌ ԺԳ.	246թ-249ա	286ա-289ա
ՃԱՌ ԺԴ.	249ա-251ա	289ա-291ա
ՃԱՌ ԺԵ.	251ա-254ա	291ա-293թ
ՃԱՌ ԺԶ.	254ա-257թ	293թ-297ա
ՃԱՌ ԺԷ.	257թ-259ա	297ա-299ա
ՃԱՌ ԺԸ.	259ա-260թ	299ա-300թ
ՃԱՌ ԺԹ.	260թ-261թ	300թ-301թ
ՃԱՌ Ի.	261թ-263թ	301թ-304ա

ԲՆԱԳԻՐ

1 ԲԱՆՔ ԽՐԱՏԱԿԱՆՔ ԵՒ ՅՈՅԺ ՀԱՐԿԱՒՈՐՔ, ՈՐՔ ՔԱԿՏԵՆ ԶԵՈՐ-
ՀՈՒՐԴ ՄԱՐՄՆԱԿԱՆ, ԵՒ ՏԱՆ ՈՒՐԱՆԱԼ ԶՄՆՈՏԻ ԽԱՔԵՆԻԹԻՆ
ԱՇԽԱՐՀԻՍ, ԵՒ ԱՅԼ ԻՄՆ ՇԻՆԵՆ ԶԵՈՐՀՈՒՐԴ ՄԱՐԴԿԱՆ:

5 Եւ այսպէս սկսանի բանս. զի [ի] դրախտ եւ քաղաք եւ թն աղբ են յա-
րարածս: Այսինքն.

ա. Նախ՝ դրախտն Աղամայ, որ էր քաղաք բնութեանս:

բ. Երկրորդ՝ դրախտ ասի դիրք աստուածաշունչ, որ է քաղաք հոգոց:

գ. Երրորդ՝ դրախտ ասի հոգիս, եւ քաղաք՝ մարմինս:

դ. Չորրորդ՝ քաղաք զգալի աշխարհիս, որ դրախտ թուի մարմնասի-

10 րացն, եւ օթեւան է սա ճանապարհորդաց. եւ չէ բնական տեղիք մեզ:

ե. Հինգերորդ՝ գերեզմանն ասի քաղաք, [զ] որ յԱղամայ հետէ քաղէ
զամենեան, եւ ժողովէ առ ինքն մինչեւ ի կատարած աշխարհի:

զ. Վեցերորդ՝ դրախտ եւ քաղաք ասի կայեանք հոգոցն, որ զամենայն
հոգի առ ինքն քաղէ եւ հաւաքէ:

15 է. Եօթներորդ՝ դրախտ կոչի վերին Երուսաղէմ. որպէս ասէ Պօղոս՝
Յախիշտակեցայ ի դրախտն Աստուծոյ, եւ լուայ բանս անճառս(1). եւ՝
Քաղաք է մեծի արքային(2): Վասն որոյ ասէ. Արդարքն ծաղկեացին ի
քաղաքի Տեառն՝ որպէս խոտ երկրի(3): Եւ Տէրն ասէ. Կա՛լ քեզ [յ] իշ-

20 (Թղ. 264ա) Եւ այդ դոյ կրկին քաղաք յեզր քաղաքիս մերոյ. եւ նախ
աստի անդ քաղուին մահուամբ: Վասն որոյ ասէ քաղաք. որպէս ասէ
Յոբ. Եղիցի քաղաքն իմ գերեզման(5):

Ասացեալ ի ՏէՐ ԱՌԱՔԵԼՈՅ ՍԻՆԵԱՅ՝ վասն այնմ քաղաքին, որ
քաղէ զամենայն ծնունդս մարդկան:

25 ա. - Եւ նախ առաջին՝ վասն դրախտի աստուածաշունչ գրոց. եւ ունի
տունս Լէ:

բ. - Երկրորդ ճառ. վասն երկրորդ քաղաքին՝ որ է բուն քաղաք մեր,
այսինքն՝ գերեզմանքն. ԺԴ:

1 սկիզբ բնագրին՝ Թղ. 263բ:

4 է աղբ:

6 ա... բ... գ թուարկումը՝ լուսանցքի մէջ է:

7 հզց. (լուսանցքի մէջ աւելցուած):

9 սգալի: դրախտ:

19 ժ քաղաքաց:

(1) Հմմտ. Բ. Կարմր. ԺԲ. 4

(2) Հմմտ. Մատթ. Ե. 35:

(3) Հմմտ. Մաղմ. ՀԱ. 16:

(4) Հմմտ. Ղուկ. ԺԹ. 17:

(5) Հմմտ. Յովբ. Զ. 10:

30 գ. - Երրորդ ճառ. զի պարտ է յամենայն օր գնալ եւ տեսանել զայն
քաղաքն եւ տեղիք պատրաստեալ մեզ:

դ. - Չորրորդ ճառ. տեսանել թէ քանի աղբ զանազան բարիք կան յայն
քաղաքն, [զ] որ աստ ոչ գոյ. ԻԹ:

ե. - Հինգերորդ ճառ. թէ ուր է քաղաքն այն, կամ վասն էր քաղաք
կոչի. տունս ԺԳ:

35 գ. - Վեցերորդ ճառ. թէ զինչ է անուն այն քաղաքին, այսինքն գե-
րեզմանն եւ հողմէրք, հանգիստ եւ շիրիմ. ԻԲ:

է. - Եւթներորդ ճառ. թէ զինչ է դուռն այնմ քաղաքին:

ը. - Ութերորդ ճառ. թէ յորում տեղով գտանեմք զայն քաղաքն. ԻԱ:

40 ք. - Իններորդ ճառ. վասն բարառնաբար խօսելոյ մեզ ընդ այն քա-
ղաքացիսն. եւ թէ զինչ պատասխան կու տան նոքա մեզ առ ի խրատ
մեզ. ՀԵ:

(Թղ. 264բ) Ժ. - Տասներորդ ճառ. թէ զինչ խնդրեն ննջեցեալքն ի
կենդանեացս. տունս ԻԱ:

45 Ժա. - Մետասաներորդ ճառ. զի վասն ոչ յիշելոյ զաղքատ ննջեցեալսն՝
կրկին պատժին յիշատակքն նոցա:

Ժբ. - Երկուսասաներորդ ճառ. զի որպէս զանազան են վառք Վրբոցն,
այսպէս եւ զանազան են տանջանք մեղաւորացն. եւ դասք դասք որոշին.
տունս Թ:

50 Ժգ. - Երեքասաներորդ ճառ. զի ողորմութիւն է բանալիք արքայու-
թեան երկնից. տունս Խ:

Ժդ. - Չորեքասաներորդ ճառ. զի կամին հոգիքն որ զայն կենաց խա-
բարն յուղարկել մեզ, որպէս մեծատունն. տունս ԼԱ:

Ժե. - Հինգեասաներորդ ճառ. վասն խմանալոյ մտօք՝ թէ գնացեալքն
զորպիսի կիրս կրեն. տունս ԽԳ:

55 Ժզ. - Վեցասաներորդ ճառ. թէ յանցանք մարդկան որ գրին՝ զինչ
լինիցին գրեանքն այն. տունս ԾԳ:

Ժէ. - Եւթեւասաներորդ ճառ. զի գնացեալ հոգիքն են կատարեալ
էութիւն, կենդանի եւ իմացող, եւ անպակաս անդամօք եւ զգայարա-
նօք. ԻԷ:

60 Ժը. - Ութեւասաներորդ ճառ. զի ի կայեանք հո(Թղ. 265ա) գոցն ահն
եւ համարն դատաստանին զարհուրեցուցանէ գնոսս. ԻԳ:

Ժթ. - Իննեւասաներորդ ճառ. զի յետ համբաւոյ դատաստանին՝ այլ
մեծ համբաւ զայ դառնութեան. թէ հուր անչէջ եւ տանջանք պատրաս-
տեալ կայ մեղաւորաց. տունս ԺԲ:

65 Ի. - Քսաներորդ ճառ. զի ահագին համբաւ՝ զոր կրեն գնացեալ հո-
գիքն՝ բարառնաբար խրատեն զմեզ զգուշանալ. տունս Լ:

31 քան:

32 գո:

37 քղքն:

38 Եւթերորդ:

46 որբոցն:

52 յուղարկել:

57 Եւթեւասան:

58 զգաւարանօք:

61 հմր (պատկուով):

62 համբաւ:

64 կա:

Ա Ռ Ա Ջ Ի Ն Ճ Ա Ռ

ՎԱՍՆ ԴՐԱՆՏԻ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ ԳՐՈՑ

Տ Ո Ւ Ն Ս Լ Է

- 5 Զարմանալի բան մի տեսայ.
եկայք պատմեմ ձեզ.
Ծածկեալ խորհուրդ կայ հրաշագան,
զոր չէ յայտնեալ մեզ:
- 10 Զոր ինչ բարի բան կայ ծածուկ
պարտ է զխտել մեզ.
Զի ճաշակեմք յայն քաղցրութեանցն,
զոր չէ ցուցեալ մեզ:
- 15 Զի ճանաչել զիմաստութիւն
եւ զխրատ՝ է մեզ դանձ,
եւ իմանալ զբան հանճարոյ(1)
չնորհազարդէ զմեզ:
- Բիմք ճաշակեն զհոտն զլալի,
զայս Յոր ասէ մեզ(2).
եւ միտք զբանս աստուածային
քննեալ՝ ծաղկէ զմեզ:
- 20 Մտցուք ի դրախտն աստուածատունկ
(Թղ. 265բ) զոր զրով տնկեաց մեզ.
Ճաշակեսցուք յամէն ծառոց
զբան զխտութեան մեզ:
- 25 Առցուք զճաշակ պէսպէս բանից
ու զհամ քաղցրութեան մեզ.
Զմայլեալք հոտով ծաղկանց բանից
ի զուարճութիւն մեզ:
- Տեսցուք զզոյն պէսպէս ծաղկանց
անճառ բանից մեզ,

1 — ձառ. B: ձառ. առաջին A:
3 — տունս ԼԷ B:
4 տեսա B:
6 — կայ հրաշագան B:
8 կա AB:

(1) Հմմտ. Առակ. Ա. 2:

16 զհոտ ըզլալի A:
20 մրտցուք B:
24 զպէսպէս A:
26 զմայլեալք B:

(2) Հմմտ. Յովբ. ԺԲ. 11:

- 30 Որով ծաղկեն միտք եւ հոգի
ու չքեղազարդեն զմեզ:
- Իսկ թէ չմտնուս յայս ցանկալի
դրախտս՝ որ տնկեաց մեզ,
Անբան տաւար եւ վայրենի,
35 խոտ կու արծես քեզ:
- Մեղուան ճանճերն որ ի վերայ
ծաղկանց շրջին՝ տես.
Նոքա դործեն զխորիսի մեղրին,
ու ան օրինակ քեզ:
- 40 Թէ դու մտօք զծաղկունս քննես՝
զոր ասացի քեզ,
Հոգիտ լինի քաղցր որպէս մեղր
ու Աստուած հաճի ի քեզ:
- 45 Տնկեաց քեզ Աստուած դրախտ ծաղկաւետ,
դնա դու մտօք ի ներ.
Զպէսպէս ծաղկունք որ անդր կան
փափաքանօք տես:
- Դու դնա յայն դրախտն հանապաղ
ու շուրջ արեկ ի ներս.
- 50 Պէսպէս ծաղկունք կան անթառամ՝
որ զուարճացնեն զքեզ:
- (Թղ. 266ա) Դրախտն Աղամայ մեզ չէր օդուտ,
այլ դուրս արար զմեզ.
Վասն այն նոր դրախտ տնկեաց Աստուած,
55 որ դու վայելես քեզ:
- Թէ դու յայս դրախտս մտանես՝
զԱստուած տեսանես.
Ու յետոյ տանի զքեզ յայն դրախտն
որ վարեցին զքեզ:

30 ծաղկին A:
31 չքեղազարդէ B:
35 արածիս A:
36 մեղու A:
39 ու այն A:
46-47 × 50-51 A:
46 պէսպէս B:
47 փափաքանօք B:

48 դնայ ... դրախտն B:
50 զպէսպէս ծաղկունք B:
52 մեր չէր աւդուտ A:
53 որ ի դուրս A:
54 տնկեաց B:
55 դուն A:
56 դրախտս A:

- 60 Բանք ծաղկավառլ աստուածաշունչ
դրախտին ծաղկեն զքեզ.
Ու զոր ինչ ծածուկ բան կայ ի քեզ՝
մէն մէն յայտնեն քեզ:
- 65 Տիւ ու գիշեր կայ ներս ի քեզ
զոր ես յայտնեմ քեզ.
Տիւ է հոգին լուսապայծառ,
ու մարմինդ գիշեր քեզ:
- Թէ հետ մարմնոյդ անկար՝ մթնով
խաւարացնէ զքեզ.
- 70 Իսկ թէ զհոգիդ սիրես՝ լուսով
ծաղկազարդէ զքեզ:
- Զի օր աւուր բղխէ դբան՝
լոյս տայ հոգին մեզ.
- Գիշեր գէշ իրաց տայ գիտութիւն
մարմինս զխաւարս մեզ:
- 75 Եւ զի խաւար կոչի մարմինս,
Դաւիթ յայտնեաց մեզ.
Վա՛յ ինձ, զի ի վրանս Կեղարու
բնակեցայ ես(3):
- 80 Մարմինս գիշեր է անգիտութեամբ,
մթնով ծածկեալ զմեզ.
Բայց աստեղօք հանճար բանից
զարդարեացուք զմեզ:
- (Թղ. 266բ) Միտքն է հոգին գերդ զարեգակն
տիւ է լուսոյ մեզ.
- 85 Որով յայտնին պէսպէս ծաղկունք
անճառ բանից մեզ:
- Սկզբն արացուք ի կենաց բանէն,
զոր Տէրն յայտնեաց մեզ.
- 90 Եթէ՝ Կերէք յամէն ծառոց (3*)
խմաստութեանց ձեզ:

63 մէն մին A:
64 ներքս A:
66 լուսապառ A:
72 ըզբան A:

(3) Հմմտ. Սաղմ. ձժԹ. 5:
(3*) Հմմտ. Ծմնդ. Բ. 16-17:

73 տա AB:
74 գիշեր գիշերաց A: տա AB:
75 խաւար A:
78 — զի B: վրանս B: վրանս A:
80 անգիտութեամբ A:
85 տիւ X գիւ B:

- Բայց ի միոյ տգէտ բանից
արդիւնեցէք զձեզ.
- 95 Այն որ չարեաց տայ գիտութիւն՝
մահ կու բերէ ձեզ:
- Զպատուէրքն զայն զոր Ադամաւ
տէր պատուիրեաց մեզ՝
Ունի խորհուրդ ազգի ազգի,
չահ եւ օգուտ մեզ:
- 100 Յամէն ծառոց, ասէ, կերէք,
հրաման տուի ձեզ.
Միայն զայն մինն մի՛ ուտէք
որ մահ կու տայ ձեզ:
- Այս բանըս մեծ խորհուրդ ունի.
պարտ է քննել մեզ.
- 105 Թէ մի՛ զամէն բարի թողուք
ու զչարն պահէք ձեզ:
- Զամէն բարի բանք պահեցէք,
[չ]որ է յօգուտ ձեզ.
- 110 Զայն մինըն մի՛ հոգայք միայն
որ ցաւ կու բերէ ձեզ:
- Դու միայն զմարմինդ քո կու պաշտես
որ ցաւ կու ծնանի քեզ:
- Եւ այլ բարի բանքն չէ քեզ փոյթ,
որ կայ յօգուտ քեզ:
- 115 Ծառ գիտութեան մարմինդ է քո,
որ մահ (Թղ. 267ա) կու բերէ քեզ.
Դա զգիտութիւն չարեացն ունի,
ու բարի տայ կարծել քեզ:
- 120 Ծառ գիտութեան բարոյ ու չարի
զմարմինդ յայտնեաց քեզ.
Որ զչարն առնէ բարեաց կարծեաց
ու կորուսանէ զմեզ:

92 տնկէն B:
93 արդիւնեցէք A:
94 տա B:
99 յաւգուտ A:
101 տիւ B:
102 մինըն A:
103 տա B:

104 բանս A:
107 + ու միայն զչարն A: զչարն B:
114 ու այլ A: բանքն A:
115 կա B:
118 դայ AB:
119 տա AB:

- 125 Դարձեալ բանս ալ խորհուրդ ունի.
միտ դիր, ուսիր եւ տես.
Զի եւթն դրախտ կայ եւ քաղաք.
դու զմինքն գիտես:
- 130 Նախկին քաղաք՝ դրախտն Ալամայ,
որ վարեցին զքեզ.
Ու դրախտ կոչի գիրքն աստուածաշունչ,
ու քաղաք հոգոց մեզ:
- 135 Դարձեալ դրախտ կոչի հոգիդ,
ու մարմինդ՝ քաղաք քեզ.
Եւ ալ զգալի քաղաք որ կան,
դրախտ կու թուին քեզ:
- 140 Դարձեալ քաղաք կոչի հոգիքն,
որ մէն մէն քաղէ զմեզ.
Ու որպէս դրախտ բուսուցանէ
ծաղկեալ մարմնով զքեզ:
- 145 Դարձեալ կայեանքն է դրախտ հոգոցն,
որ ժողովին ի ներ.
Քաղաք է նա շինեալ յերկինս(4),
յոր հաւաքէ զմեզ:
- 150 Դու մի կենալ յայս քաղաքիս,
որ չէ մնալոյ քեզ.
Ալ դու փութա յայն (թղ. 267բ) բուն քաղաքն
յոր կու տանին զքեզ:

(Շարունակելի)

Հրտ. Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

124 բան A:
125 + ու ուսիր A:
126 եթն A: + ի դրախտ B:
127 մինքն A:
132 հոգիս A:
134 եւ ալ X դարձեալ A:

137 մէն մին A:
138 զդրախտ A:
148 մին կենալ A: + յայս մին քաղաքս A:
149 որ ոչ է A:
150 փութայ B:
151 որ A:

(4) Հմմտ. երբ. թ. 22-23:

(5) Հմմտ. Մատթ. Ե. 35:

«ԱՆՍԻՉ ԱՆՏԻՈՒԲԱՅ» ՕՐԻՆԱԳՐՔԻՆ

Յարդ միակ օրինակ մը ծանօթ էր Ան-
սիգ Անտիոքայ գրչագրի՝ հայերէն ձեռա-
դրաց մէջ, ութածալ, թղթեայ, ընտիր
բոլորգրով 1330-1350, միջնաւոր ընտիր
մանրանկարով մը, արդէն լաւ ծանօթ.
Լեւոն Ե. Հայ կիլիկեան թագաւորը դա-
տաստանի նստած, հաւանաբար Սարգիս
Պիծակէ մանրանկարեալ: Այս մեծարժէք
ձեռագիրը այժմ մաս կը կազմէ Վենետիկի
Միխիթարեան ձեռագրաց մատենադարա-
նին ճոխ հաւաքածոյին:

Հոս երկար պիտի չծանրանամ Անսիգ
Անտիոքայ կազմութեան, բնագրին եւ հայ
թարգմանութեան մասին: Այս Անսիգը
խմբագրուած էր լատիներէն եւ Անտիոքի
Նազակիր իշխանութեան գործածութեան
համար պատրաստուած: Իժմախտաբար
ցարդ անոր լատիներէն բնագրով օրինակ
մը չէ գտնուած եւ միայն այս հայերէն
թարգմանութեամբ ծանօթ է, որ կատար-
ուած է 1265ին: Սակայն հայերէն սկզբնա-
կան օրինակը կամ թարգմանութեան բնա-
գիրն ալ կորսուած է, եւ միայն 1330-1ի
օրինակութիւնը մեզի հասած է: Այս օրի-
նակութեան է որ հայերէն թարգմանեալ
բնագրին առնթեր՝ նոր Ֆրանսերէն
թարգմանութեամբ հրատարակութիւն մը
եղաւ Ս. Ղազարի տպարանէն 1876ին: Այս
ձեռագրին գիւտէն եւ անոր հրատարակու-
թեան վերջ մինչեւ այսօր՝ դեռ ոչ մէկ
ուրիշ օրինակ կամ հատուկոտոր Անսիգ
Անտիոքայ չէր գտնուած հայ ձեռագիր-
ներուն մէջ:

Քանի մը տարի առաջ Կ. Պոլսէն ինծի
ղրկուած ընտիր ձեռագրաց անհատական
հաւաքածոյի մը մէջ, որ այժմ իմ ձեռա-
դրաց հաւաքածոյիս մաս կը կազմէ, գր-
տայ ճոխ կանոնագիրք մը 1850ական թը-
ւականներէն, կանաչ կաշիէ, ոսկեկիտ-

ուած զարդերով, կազմի մը մէջ ամփոփ-
ուած:

Չանազան մասերէ բաղկացեալ այս շա-
հեկան ձեռագիր կանոնագիրքը գրուած է
1621-24 թուականներուն, Գրիգոր Հղան-
ցի կամ Նիղանցի վաստակաւոր գրչէն
«Ի մեծ յերկիր եւ յանուանին».

Հիշան կոչի ի հայ բառին.

Ընդ հովանեաւ յարութենին.

Եւ սրբուհոյ Աստուածածնին.

Եւ Յովաննու Կարապետին.

Եւ Գէորգայ զօրավարին.

Եւ Սբ. Ստեփաննոս Նախավկային.

Եւ Սբ. Սարգսի եւ որդո նորին:»

Գրչութիւնը կատարուած է Տէր Կա-
րապետ վարդապետին համար, որուն կը-
նիքը զարդարուն, վարդապետական դա-
ւազանով, ունի Ռի (1591) թուականը:
Գրուած է ոչ մաքուր բոլորգրով, տեղա-
կան թղթի վրայ:

Այս ձեռագրիս էջ 395ին կէսին բոլոր-
գիր սեւ մեկնով գրուած է

Անտաքոյի նորտերոյն անսիգն է:

Հատուածս կը հասնի մինչեւ էջ 402 կէ-
սին, եւ կը բաղկանայ եօթը մասերէ, ինչ-
պէս որ սեւ մեկնով նոտրգրեալ համա-
ռօտ խորագիրներն ալ ցոյց կու տան:

Անսիգ Անտիոքայ այս իմ օրինակս շա-
հեկան է քանի մը կէտերով: Նախ որով-
հետեւ այսպէսով կ'ունենանք երկրորդ օ-
րինակ մը, թէկուզ 1622էն: Այս 1622ի ձե-
ռագիրը անտարակոյս ունէր իր օրինակը,
որ իբր բնագիր կը տարբերի Ս. Ղազարու
1330-1ի օրինակէն: Երկրորդ, իմ օրինակս
իբր տեսակ մը համառօտագրութիւն՝ կը
տարբերի Ս. Ղազարու օրինակէն: Եր-
րորդ, իմ օրինակս ցոյց կու տայ որ Ան-
սիգ Անտիոքայ գործածուած էր մեր նախ-
նեաց մօտ, որ ունէին անոր համառօտա-
գրեալ օրինակն իսկ: